ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԹԱՐԳՄԱՆՉԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արձանագրություն N 6

20 հունիսի 2013 թվականի
քաղաք Երևան

ՀՀ արդարադատության նախարարության նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի հունիսի 20-ի նիստում ուսումնասիրեց նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգման մասնակցի Գարիկ Պողոսյանի բողոքը:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Ա. Օրբելյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հակոբյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության իրավաբանական անձանց պետական գրանցման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարական համակարգի օրենսդրական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Ն. Խալաթյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության նոտարիատի և ՔԿԱԳ մարմինների գործունեության վերահսկողության բաժին

Լ. Աբովյան - ՀՀ արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոնի թարգմանչական բաժնի պետ

Է. Ադումյան - ՀՀ արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոնի թարգմանչական բաժնի պետ

Հանձնաժողովի մյուս 3 անդամները տեղեկացվել են նիստի մասին, բայց նախօրոք ծանուցել մասնակցելու անհնարինության մասին և չեն ներկայացել նիստին:

ՕՐԱԿԱՐԳ՝

Նոտարական գործողություններին մասնակցող՝ քաղաքացի Գարիկ Պողոսյանի, թարգմանչի որակավորման ստուգման աշխատանքի բողոքարկման քննություն:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝

Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի 2-ի N 193 որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետի, Հանձնաժողովը ուսումնասիրեց քաղաքացի Գարիկ Պողոսյանի դիմումը՝ բողոքարկման ներկայացված բաց թողնված ժամկետը համարվեց հարգելի: Բողոքարկվող աշխատանքը վերանայվեց կրկին՝ թույլ տրված սխալների համար մասնագետի կողմից սխալ հաշվարկված բալերը վերահաշվարկվեցին և որոշեց բավարարել բողոքը:

Մասնակիցը կարող է հունիսի 25-ից սկսած ներկայանալ ՀՀ արդարադատության նախարարություն համապատասխան Տեղեկանքը ստանալու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Աշխատանքի կրկնակի ուսումնասիրությունից հետո քաղաքացի Գարիկ Պողոսյանի կողմից ներլայացված դիմումի համաձայն բողոքարկման ժամկետը բաց թողնելը համարել հարգելի, բավարարել բողոքը, բարձրացնել մասնակցի գնահատականը՝ գնահատելով դրական միավոր, և տրամադրել Տեղեկանք:

ընդունվեց միաձայն

2. Որոշումը ուղարկել դիմորդի թողած փոստային հասցեով՝ պատվիրված նամակի միջոցով, կամ դիմորդի ցանկության դեպքում դիմորդը կարող են որոշումները ստանալ անձամբ՝ անձ հաստատող փաստաթղթով, կամ ներկայացուցչի միջոցով՝ լիազորագրի ներկայացմամբ, ՀՀ արդարադատության նախարարությունում:

ընդունվեց միաձայն

Արձանագրությունը կազմված է 2 էջից:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. ՕՐԲԵԼՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ